ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻՎ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նրա պատճառների և մասնավորապես՝ նրա գենեզիսի կենսաբանական, հոգեբանական և սոցիալական գործոնների հարաբերակցության բացահայտմամբ: Հանցավորության դրսևորումների բազմազանությունը, նրա կապը հասարակական կյանքի տարբեր կողմերի հետ պայմանավորում է նրա պատճառների դասակարգման անհրաժեշտությունը: Հոգեբանա-քրեաբանական գրականության մեջ (Ա.Ս. Ստուլյարենկո[9], Վ.Ն Կուդրյավցև [8]) առանձնացնում են հանցավորության պատճառների և պայմանների հետևյալ հիմքերը՝ գործողության մեխանիզմը, կենսագործունեության մակարդակը, բովանդակությունը, առաջացման բնույթը, իրադարձությանը մոտ լինելը, աղբյուրները և այլն:

Որպես հանցավորության և հանցագործությունների առավել մոտ պատճառներ հանդես են գալիս սոցիալ-հոգեբանական երևույթները, մասնավորապես՝ *քրեածին, դեֆորմացված (այլափոխված) հասարակական և անհատական գիտակցությունը,* որը հակասում է միջազգային, սահմանադրական, քրեական իրավունքի համընդհանուր նորմերին և սկզբունքներին:

Ըստ առաջացման բնույթի հանցավորության պատճառները սովորաբար լինում են *օբյեկտիվ, օբյեկտիվ-սուբյեկտիվ* և *սուբյեկտիվ,* իսկ ըստ աղբյուրների՝ *արտաքին* և *ներքին:* Հանցավորության ներքին դետերմինանտները մի կողմից կապված են հասարակության ներքին հակասությունների հետ, իսկ մյուս կողմից՝ հանցածին դիրքորոշումների և այլ այլափոխված որակների հետ, իսկ արտաքին կամ օբյեկտիվ պատճառները սոցիալապես պայմանավորված անբարենպաստ նեգատիվ երևույթներն են, որոնց թվում են հանցավորությունը, ամենաթողությունը, անպատժելիությունը, կոռուպցիան և այլն:

Տարբեր հետազոտություններում (Մ. Վերմեշ [4], Վ.Կուդրյավցև [8] և ուր.) հանցավոր գործողության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը հաճախ նույնացվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառականության հետ: Ինչ խոսք, մարդկային վարքը անձի վրա անմիջականորեն ներգործող գործոնների ուղղակի հետևանք չէ: Արտաքին հանգամանքների համակարգը բեկվում է նրա ներքին՝ հոգեկան պայմանների համակարգում: Այդ պատճառով էլ չի կարելի միանշանակ առանձնացնել հանցավորության ո՛չ օբյեկտիվ և ո՛չ էլ սուբյեկտիվ

գործոնները: Հանցագործության մեջ վերջիններս դրսևորվում են միասնության մեջ, ամբողջական տեսքով:

Մանկական հանցավորության պատճառականության բացահայտման և դրա դեմ պայքարի ուղիների գիտատեսական հիմքերի մշակման համար ելակետային է այն դրույթը, որ հանցավորության գործոնները տարբերվում են ըստ հանցավորության վրա ազդելու *ինտենսիվության* և *անմիջականության*: Դրանց շարքում են ներքին պատճառները, որոնք ձևավորվում, փոխում են իրենց կառուցվածքն ու բովանդակությունը սոցիալական պայմանների ազդեցության տակ: Վերջիններս հոգեբանա-քրեաբանական գրականության մեջ (Ա.Մ. Ստոլյարենկո [9], Ս.Ջ. Արզումանյան [2]. Մ.Ի. Ենիկեև [5] և ուր.) դիտարկվում են որպես հանցավորության արտաքին, *օբյեկտիվ պատճառներ*, որոնք ազդում են ներքին պատճառների փոփոխության վրա: Ըստ հանցավորության և հատկապես անչափահասների հանցավոր վարքի կազմավորման հոգեբանաքրեաբանական տեսության (Ս.Ջ. Արզումանյան) այդ գործոններն ընդգրկվում է երկու հիմնական համակարգերում[2]: Առաջին համակարգի մեջ ներգրավված են անձի բացասական զարգացումը և դիրքորոշումների քրեականացումը կանխորոշող *անմիջական անբարենպաստ ներգործությունները*: Անբարենպաստ գործոնների երկրորդ խումբը անձի բարոյական անկմանը նպաստում է *միջնորդավորված* ձևով:

Մեր կարծիքով, ժամանակակից պայմաններում անչափահասների հանցավորության յուրահատուկ պատճառներից մեկը *երեխաների և դեռահասների հանգստի կազմակերպման անբավարար պայմաններն են*: Շատ մանկական հաստատություններ և կազմակերպություններ դադարեցրել են իրենց գոյությունը, իսկ նրանց պատկանող տարածքներն ու շինությունները վարձակալությամբ են տրվել տարբեր ձեռնարկատիրական նպատակների համար: Շարունակվում է ամառային զբաղվածության և առողջարանային համակարգի քայքայումը: Բազմաթիվ առողջարանային ճամբարներ փակվել են, իսկ անապահով և անբարենպաստ ընտանիքների շատ երեխաներ չեն կարող իրենց թույլ տալ հանգստանալ թանկարժեք ուղեգրերով շքեղ առողջարաններում:

Հատկապես սուր է *ընտանեկան անբարենպաստության* հիմնախնդիրը՝ համընդհանուր *աղքատության, չքավորության* ֆոնի վրա, *ընտանիքներում տեղ գտած բարոյական դեգրադացիան*: Այս ընտանիքներում հիմնականում ծաղկում է ալկոհոլամոլությունը, թմրամոլությունը, մարմնավաճառությունը, բացակայում են բարոյական արգելքները, տարրական բարեկրթությունը, օտարածին բարքերը, որոնք խարխլեցին մեր ավանդական ընտանիքի էթնիկական նկարագիրը:

Անչափահասների հանցագործությունները բնորոշվում են լատենտության (գաղտնիության) բարձր մակարդակով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նախքան առաջին անգամ դատապարտվելը դեռահասները արդեն կատարած են լինում մի քանի հանցարարք: Դա նշանակում է *սոցիալական բարձիթողության* և *անպատժելիության մթնոլորտում* չի ապահովվում *պատժի անխուսափելիությունը*, որը հանցավոր վարքի նախազգուշացման կարևորագույն միջոցներից է: Անչափահասների հանցավոր վարքի կազմավորման պատճառներից է նաև իրավապահ մարմինների աշխատանքի բացթողումներն ու թերությունները: Ներկայումս դեռահասների և պատանիների հետ կանխարգելիչ գործունեություն իրականացնելուն կոչված հասարակական-պետական կառույցների աշխատանքում բազմաթիվ անհամաձայնություններ և անգործություն է նկատվում: Ամենուրեք բացակայում են անչափահասների հարցերով հանձնաժողովները, դադարեցրել են գոյությունը երեխաների և դեռահասների հետ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնող մի շարք հասարակական կազմակերպություններ, իսկ մարզպետարանների կառույցներում գործող երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները դեռևս ձևավորման փուլում են:

Ա.Մ. Բանդուրկան, Ս.Պ. Բոչարովան, Ե.Վ. Չեմլյանսկայան [3, էջ 532-597] անչափահասների ասոցիալ վարքի օբյեկտիվ գործոնների շարքն են դասում անմիջական միկրոմիջավայրի անբարենպաստ ներգործությունները: Վերջիններս ըստ Ս.Պ. Բոչարովայի հետազոտությունների [3] արտահայտված են տասներեք ցուցանիշներում, որոնք միավորվում են միջավայրի չորս անբարենպաստ գործոններում: Դրանք են՝ անբարենպաստ կարգավիճակը ձևական խմբերում, փոխներգործությունը ասոցիալ խմբերի հետ, ընտանիքում շփման և դաստիարակության անբավարար աստիճանը, ընտանիքի ապակառուցողական ներգործությունն անչափահասի վրա: Դրանց կարող ենք հավելել նաև զանգվածային լրատվամիջոցների ազդեցությունը, մասնավորապես տպագիր աշխատանքների և տեսաֆիլմերի միջոցով իրականացվող քրեական կենսակերպի ուղղակի և անուղղակի գովազդը:

Ընդհանրացնելով անչափահասների հանցավորության օբյեկտիվ պատճառականության վերլուծությունը՝ հարկ ենք համարում առանձնացնել նաև այն պատճառներն ու պայմանները, որոնք պայմանավորված են նոր տնտեսական հարաբերությունների անբարենպաստ ներգործությամբ:

1. Հասարակության զարգացման անցումային շրջանը, սոցիալական և միջէթնիկական լարվածությունը, հետսթրեսային իրավիճակը և դրանցով պայմանավորված հասարակության բարոյահրավական հենքի կտրուկ այլափոխումները, բնակչության սոցիալ-տնտեսական վատթար վիճակը, արտագաղթը՝ իրենց բնորոշ

քրեածին և սոցախտածին դրսևորումներով: Վերջին տարիներին հայ հոգեբանների կողմից կատարված մի շարք ուսումնասիրություններով հիմնավորված է, որ արտակարգ իրավիճակների, սոցիալական լարվածության անցումային շրջանին բնորոշ նեգատիվ նորագոյացությունների բացասական ազդեցությունը հիմք է հանդիսանում անձի արժեքային կողմնորոշումների և սոցիալական դիրքորոշումների այլափոխումների. մարգինալության, դևիանտ և հանցավոր վարքի կազմավորման ու դրսևորման համար: Անցումային ժամանակաշրջանում քրեական գործունեությունը. տարբեր քրեական, հանցավոր կլաններին և խմբավորումներում ներգրավվումն ավելի ու ավելի հեղինակավոր զբաղմունք է դառնում անչափահասների համար: Եթե նախկինում հանցավոր խմբավորումները դիտարկվում էին որպես մարգինալ կարգավիճակ ունեցող, ապա ներկայումս այն կարելի է դիտարկել որպես ինքնուրույն սոցիալական խումբ, որն ունի իր սեփական ստվերային սոցիալական կառուցվածքը և շերտավորումը:

2. Սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական հակասությունները, հասարակության նյութական շերտավորումը, սոցիալական անհավասարությունը, շուկայի քրեականացման միտումները, որոնք արտահայտում են տնտեսվարման նոր ձևերին անցման հետ կապված դժվարությունները, հանգեցրել են *հասարակական արժեքների վերափոխմանը*. Կոլեկտիվիստական և հոգևոր արժեքներից անցում է կատարվում դեպի շահադիտական-անհատական (ինդիվիդուալիստական) արժեքային համակարգ: Դրան հատկապես սուր են հակազդում անչափահասները: Բազմաթիվ քրեաբանական հետազոտություններով հիմնավորված է, որ դեռահասների միջավայրը հիվանդագին է հակազդում հասարակության ճգնաժամային վիճակին: *Հասարակական նոր արժեքները, դիրքորոշումներն ու պատկերացումները*, որոնք վերաբերում են նյութական բարեկեցությանը, փողին, իշխանությանը և փոխանցվում են երեխային մեծահասակների, ծնողների, մանկավարժների խրատների, դպրոցական դաստիարակության կամ սոցիալականացման այլ ինստիտուտների միջոցով: Մեր կենցաղ նույնպես ներմուծվեց փողի, իշխանության պաշտամունքը, առաջ եկան արևմտյան երկրներում դարերով գերակայող կոչեր և կարգախոսներ («Փողը հոտ չունի», «Ամեն ոք իր համար, միայն Աստված՝ բոլորիս համար», «հարստությունը կյանքի նպատակ է և իմաստ» և այլն):

3. Կուլտուր-կրթական մակարդակի և սոցիալական կարգավիճակի անհամապատասխանությունը, բարոյաիրավական նորմերի անբավարար իմացությունը, սոցիալ-տնտեսական գործունեությանը մասնակցելու անչափահասների բացասական փորձը ուղղակիորեն ազդում է անչափահասների ընդհանուր, այդ թվում նաև իրավական սոցիալականացման և նրա հնարավոր խաթարումների վրա: Տնտեսական և այլաբնույթ սոցիալապես համարժեք գոր-

ծունեությամբ զբաղվելու մարդկանց իրավահավասարության բացակայությունը, նշված ոլորտներում առկա անբարենպաստ, հաճախ նաև քրեածին ազդեցությունը, իմացական և տնտեսական պահանջմունքների միջև անհամապատասխանությունը կարող են հիմք հանդիսանալ սոցիալ-տնտեսական գործառույթների դերի չհասկացման, դրանց ոչ համարժեք ընկալումների և համապատասխանաբար, անձի մոտ բազմաթիվ բացասական նորագոյացությունների առաջացման համար:

Տարօրինակ չէ, որ շատ պատանիներ, դպրոցն ավարտելուց հետո միակ ընդունելի հեռանկար են համարում ԲՈՒՀ ընդունվելը, ինչն այսօրվա մեր կենցաղում հաստատված տխուր բարքերի պատճառով շատ հաճախ հնարավոր է դառնում ամենևին ոչ բոլորի համար: Արդյունքում անչափահասները ֆրուստրացվում են՝ ապրելով անորոշության, չփոթվածության զգացումներ, որոնք իրենց մեջ վարքագծային պոռթկումների և անբարո արարքների սպառնալիք են պարունակում:

4. Հասարակության մեջ գերիշխող շուկայական և մրցակցային հարաբերությունները, զանգվածային լրատվամիջոցների անբարենպաստ ներգործությունները և դրանց հետևանքով առաջ եկող գիտակցության խաթարումները, աշխարհի և մարդկանց նկատմամբ վերաբերմունքի խեղաթյուրումները, ոչ համարժեք դիրքորոշումները: Մի շարք հոգեբանների կարծիքով (Լ. Անցիֆերովա, է. Էրիքսոն, Վ. Ֆրանկլ, է. Ֆրոմ, Կ. Հորնի և ուր.) շուկայական հարաբերություններն ազդում են հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների վրա՝ զգալիորեն պայմանավորելով հասարակության սոցիալ-հոգեբանական և բարոյահոգեբանական մթնոլորտը, մարդկանց արժեքային կողմնորոշումների համակարգը, նրանց վարքի և արարքների դրդապատճառները: Առուվաճառքի, շուկայական հարաբերությունների ոլորտում դիտարկվող քրեածին երևույթները հատկապես արտահայտվում են նրանում, որ դրանք խեղաթյուրում են բնակչության օգուտի և սպառողական ապրանքի միջև հարաբերակցությունը և պայմաններ են ստեղծում դրամական միջոցների անօրինական վերաբաշխման համար: Նման դեպքերում անչափահասների մոտ կազմավորվում և ձևավորվում են սխալ, պատրանքային համոզմունքներ գոյություն ունեցող սոցիալական արժեքների դրամական փոխարժեքների գոյության մասին: Դրանք, նույնիսկ չգիտակցվելով մարդու կողմից, որոշակի նախապայմաններ են ստեղծում այդ արժեքների ոտնահարման համար, ինչը դրսևորվում է նրանց ներքին խոր անձնային քրեածին դիրքորոշումների, հակաբարոյական և հակաիրավական վարքի պատրաստականության ձևով: Գնալով ավելի են արմատավորվում «ամենազոր փողի» մասին պատկերացումները, որոնք կոնկրետանում են անձի խոսքային կառուցվածքներում և անօրինական վարքում:

Ժամանակակից պայմաններում անչափահասների հանցավորության պատճառներն ու պայմանները հարկ է փնտրել նաև պետության կողմից տարվող *երիտասարդական քաղաքականության հակասություններում*, հատկապես զբաղվածության, մասնագիտական կրթության, ընտանեկան, դպրոցական դաստիարակության, երիտասարդների հանգստի կազմակերպման ոլորտներում տեղ գտած բացթողումներում, ինչպես նաև մի շարք աշխարհաքաղաքական գործոններում:

Անչափահաս հանցագործների հոգեբանա-քրեաբանական բնութագրերի, հիմնախնդրի շուրջ կատարված տեսական և փորձարարական հետազոտությունների վերլուծությունից պարզ է դառնում, որ կոնկրետ հանցարարքի և անձի հանցավոր վարքի օբյեկտիվ պատճառները հաճախ շատ են լինում և որոշակիորեն դժվար է լինում բացահայտել թե օբյեկտիվ պատճառներից (անբարենպաստ ընտանիք, հասակակիցների միջավայր, սոցիալական և մանկավարժական բարձիթողություն և այլն) որն է առավել չափով ազդել դրա վրա: Սակայն ակնհայտ է, որ ժամանակակից պայմաններում զգալիորեն աճել են ինչպես այն օբյեկտիվ պատճառները, որոնք բնութագրվել են բազմաթիվ քրեահոգեբանների աշխատանքներում, այնպես էլ առաջ են եկել նոր անբարենպաստ սոցիալական պայմաններ: Իսկ սոցիալական պաշտպանվածության հասարակական-պետական քաղաքականության բացակայության պայմաններում աճել է այդ անբարենպաստ ներգործություններին ենթարկված անչափահասների քանակը: Մանկական հանցավորության օբյեկտիվ պատճառականության շղթայում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում տարատեսակ անմիջական և միջնորդավորված հասարակական նեգատիվ ներգործությունները: Վերջիններիս շարքում հատկապես պետք է նշել նոր հասարակության գոյության անցումային փուլով պայմանավորված անձի սոցիալականացման ինստիտուտների ոչ լիարժեք կենսագործունեությունը, որոնք ժամանակակից պայմաններում ենթարկվելով զգալի այլափոխումների՝ որոշակիորեն թուլացրել են իրենց կարգավորիչ և վերահսկիչ ֆունկցիան, մեծամասամբ դադարելով ռեֆերենտ դեր խաղալ անչափահասների համար և նպաստելով անչափահասների մոտ անբարենպաստ որակների և հատկանիշների ձևավորմանը: Յուրացնելով որոշակի նորմեր, հայացքներ և կողմնորոշումներ՝ սուբյեկտը իր կյանքի յուրաքանչյուր իրադարձությանը հակազդում է՝ այդ նորմերին և չափանիշներին համապատասխան: Այն անձնային բնութագրերը, որոնք ձևավորվել են անձի սոցիալականացման սկզբնափուլերում, իսկ այնուհետև ամրակայվել են, հնարավորություն են տալիս հասկանալ հանցավոր վարքի պատճառականությունը, քանզի դրանք կանխորոշում են անձի վերաբերմունքը կոնկրետ հանգամանքների և իրադարձությունների նկատմամբ: Հետևաբար,

կարելի է պնդել հանցավոր վարքի և առհասարակ հանցավորության սուբյեկտիվ պատճառականության մասին, որն օբյեկտիվորեն գոյություն ունի և պայմանավորված է սոցիալական ներգործություններով: Անցումը համասոցիալականից անհատականին տեղի է ունենում յուրօրինակ սոցիալ-հոգեբանական մեխանիզմների միջոցով:

Օբյեկտիվ անբարենպաստ գործոնները առաջին հերթին ներգործում են այն անձանց վրա, որոնք որոշակի ընկալունակություն ունեն այդ գործոնների նկատմամբ: Բեկվելով անչափահասների գործունեության և գիտակցության կողմից՝ միկրո և մակրոմիջավայրի օբյեկտիվ ներգործությունները հանգեցնում են սուբյեկտիվ (ներանձնային) որակների և հատկանիշների ձևավորմանը, որոնք այնուհետև հանդես են գալիս որպես ասոցիալ գործողությունների դրդապատճառներ:

Ըստ Մ. Ենիկեևի հանցավորության *սուբյեկտիվ պատճառներն* են անձի սոցիալական դիրքը, նրա արժեքների և դրդապատճառների համակարգի հիերարխիան (աստիճանակարգը), հետաքրքրությունները, սոցիալականացման, բարոյագիտակցության և իրավագիտակցության մակարդակը, դիրքորոշումներն ու վարքագծային կարծրատիպերը: Իսկ *սուբյեկտիվ պայմանները*, Ենիկեևի կարծիքով, անձի ժողովրդագրական, էթնիկական և հոգեդինամիկ առանձնահատկություններն ու ժամանակավոր հոգեվիճակներն են [5]:

Մենք կարծում ենք, որ անչափահասների հանցավորության և դրա շարունակական աճի գլխավոր պատճառը *սոցիալ-տնտեսական վիճակի կտրուկ վատթարացումն* ու հասարակության մեջ *սոցիալական լարվածության աճն է*: Կենսամակարդակի կտրուկ անկումը առավել ուժեղ է ազդում դեռահասների և պատանիների վրա: Անչափահասների բնորոշ առանձնահատկությունները, նրանց առավել ընկալունակ են դարձնում այն նեգատիվ սոցիալական գործոնների նկատմամբ, որոնց մեծահասակները համեմատաբար ավելի լավ են դիմադրում: Հնարավորություն չունենալով օրինական ճանապարհով բավարարել սեփական պահանջմունքները՝ շատ դեռահասներ սկսում են անհրաժեշտ առարկաներ, ապրանքներ հայթայթել անօրինական ճանապարհներով, ներգրավվել հանցավոր խմբերում:

Հոգեբանները (Ս. Արզումանյան [2], Մ. Ենիկեև [5], Գ. Շիխանցով [7]) անչափահասների վարքի կարևորագույն սուբյեկտիվ դրդապատճառային բաղադրամասերից են համարում ձևավորված պահանջմունքների, հետաքրքրությունների, զգացմունքների, իդեալների կազմը, նրանց զարգացվածության և կայունության մակարդակը: Հետևաբար, հարկ է դիտարկել նաև հանցագործի անձի *սոցիալ-հոգեբանական ենթահամակարգը*. 1) *ուղղվածության ենթակառուցվածք*, որն ընդգրկում է առավել կայուն, հասարակայնորեն

նշանակալից որակները, 2) *փորձի ենթակառուցվածքն* ընդգրկում է անձի գիտելիքները, հմտությունները, սովորությունները և այլ հատկանիշներ, որոնք դրսևորվում են գործունեության առաջատար ձևերում, 3) *հոգեկան արտացոլման ձևերի ենթակառուցվածքն* արտահայտվում է իմացական գործընթացներում, ինչպես նաև անձի հոգեհուզական վիճակներում, 4) *խառնվածքի և այլ ժառանգական պայմանավորվածություն ունեցող հատկությունների ենթակառուցվածքը* նույնպես միավորվելով, բեկվելով արտաքին ներգործությունների կողմից, էապես ազդում է բնավորության ձևավորման և վարքագծային ակտիվության վրա:

Մեր հետազոտության արդյունքների վերլուծությամբ հաստատվել է, որ որպես անչափահասների հանցավոր վարքի սուբյեկտիվ (հոգեբանական) պատճառներ հանդես են եկել այնպիսի հոգեբանական գոյացություններ, ինչպիսիք են անհավասարակշռվածությունը, գրգռվողականությունը, կոնֆլիկտայնությունը, տագնապայնությունը, նեգատիվիզմը, ինքնաբերական և ռեակտիվ ագրեսիվությունը, թշնամանքը, սեփական արարքների հետևանքների կանխատեսման ցածր ընդունակությունը, հուզական անկայունությունն ու տհասությունը, բարոյագիտակցության և իրավագիտակցության ցածր մակարդակը [1]:

Վարքի անկազմակերպվածության, սեփական արարքների նկատմամբ գիտակցական վերահսկողություն իրականացնելուն խոչընդոտում է դժվարությունների հաղթահարման համապատասխան ռազմավարության բացակայությունը, իսկ մյուս կողմից՝ անձնային վտանգի սպասումները, որոնք դրսևորվում են բարձր տագնապայնության ձևով: Իսկ անկայուն անչափահասների մոտ շատ հաճախ նկատվում էր հուզական լարվածության ինքնահնդուկցիա. անկազմակերպ վարքը սրում է հուզական լարվածությունը, ինչն էլ իր հերթին առավել անկազմակերպ ու անկառավարելի էր դարձնում նրանց վարքագիծը ինչպես մեծահասակների, այնպես էլ հենց իրենց համար:

Այսպիսով, հիմնախնդրի վերլուծությունը ցույց է տալիս, որ մանկական հանցավորության օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները փոխկապակցված են ու դրսևորվում են օրգանական միասնության մեջ:

Անչափահասների հանցավորությունը, հասնելով որոշակի բարձր մակարդակի, իր մեջ կրում է վերարտադրության պոտենցիալ և ընդունակ է պահպանելու աճի միտումները սուբյեկտիվ կամ ներքին պատճառների շնորհիվ՝ նույնիսկ օբյեկտիվ պայմանների և պատճառների էական փոփոխությունների բացակայության պարագայում: Հանցավորության օբյեկտիվ իրադրային անբարենպաստ գործոնների նվազման պայմաններում մանկական հանցավորության սոցիալ-հոգեբանական վաղ կանխարգելման հիմնահարցը շարունակում է

մնալ հրատապ և պահանջում է համալիր միջոցառումների պետական ծրագրի մշակում և ներդրում:

Գրականություն

1. Խեդոյան Ս.Տ. «Մանկական հանցավորության զարգացման շարժընթացը նոր տնտեսական հարաբերությունների պայմաններում և դրա հաղթահարման ուղիները» ատենախոսություն հոգ. գիտ. թեկն. գիտ. աստիճանի հայցման, Երևան, 2005թ.
2. Арзуманян С.Д. Психолого-криминологическая теория становления личности правонарушителя, Е., 2000
3. Бандурка А.М., Бочарова С.П., Землянская Е.В. Юридическая психология, Харьков, 2002
4. Вермеш М. Основные проблемы криминологии, М., 1978
5. Еникеев М.И. Юридическая психология, М., 2003
6. Шиханцев Г.Г. Юридическая психология, М., 1998
7. Кудрявцев В.Н. Причинность в криминологии, М., 1961
8. Столяренко А.М. Прикладная юридическая психология, М., 2001